

**Պահանջ N1 (5 միավոր 1x5)**

1	Դիտարկելով մանրադիտակի տակ երևացող պատրաստուկի բջիջները՝ ընտրեք ճիշտ պատասխանը: Երևում են.	ա) միայնակ բջիջներ բ) կլորավուն բջիջներ գ) բողբոջող բջիջներ դ) ձողաձև բջիջնեջ	ա) ճիշտ է բ) ճիշտ է գ) ճիշտ է դ) սխալ է
2	Հացաթխման խմորասնկերի ո՞ր ներառուկներն են ներկվել Լյուգոլի լուծույթով	ա) օսլայի հատիկները բ) գլիկոգենի հատիկները գ) ճարպի կաթիլները դ) վոյուտինի հատիկները	ա) սխալ է բ) ճիշտ է գ) սխալ է դ) սխալ է
3	Ի՞նչ գունավորում է առաջանում.	ա) մուգ կապույտ բ) դարչնագույն գ) սև դ) կարմրավուն	ա) սխալ է բ) ճիշտ է գ) սխալ է դ) սխալ է
4	Խմորասնկերի ներառուկները գտնվում են հիմնականում.	ա) ցիտոպլազմայում բ) վակուոլներում գ) պլաստիդներում դ) լիզոսոմներում	ա) սխալ է բ) ճիշտ է գ) սխալ է դ) սխալ է
5	Գրել սպիրտային խմորման քիմիական ռեակցիան		

**Պահանջ N2 (5 միավոր 0.25x20)**

1.	Saccharomyces cerevisiae-ն առաջին էուկարիոտներն են, որոնց գենոմի ԴՆԹ-ի նուկլեոտիդային հաջորդականությունը որոշվել է	Այո
2.	Խմորասնկերը կոչնչանան, եթե նրանց միտոքոնդրիոմների գենոմում տեղի ունենա լետալ մուտացիա	Ոչ
3.	Խմորասնկերը Գրամբացասական են	Ոչ
4.	Որոշ խմորասնկեր բնակվում են հողում	Այո
5.	Կախված պայմաններից խմորասնկերի էներգիական փոխանակությունը ընթանում է խմորման կամ շնչառության ճանապարհով	Այո
6.	Խմորասնկերի բջջապատը կազմված է պեպտիդազիկանից	Ոչ
7.	Խմորասնկերի կենսական ցիկլում մեյոզ տեղի չի	Ոչ

	ունենում	
8.	Խմորասնկերը օգտագործում են անօրգանական նյութերը որպես էներգիայի և ածխածնի աղբյուր	Ոչ
9.	Խմորասնկերի կենսագործունեության ընթացքում կաթնաթթու է կուտակվում միջավայրում	Ոչ
10.	Գոյություն ունեն մարդու համար ախտածին խմորասնկեր	Այո
11.	Saccharomyces ցեղի խմորասնկերը առաջացնում են իրական միցել	Ոչ
12.	Խմորասնկերին պատկանում են այն բոլոր սնկերը, որոնք միաբջջիջ փուլում ունակ են վեգետատիվ բազմացման	Այո
13.	Խմորասնկերը հիմնականում պատկանում են կոմենսալներին	Այո
14.	Խմորասնկերի բջջակորիզը բաժանվում է բողբոջի առաջացումից հետո	Ոչ
15.	Խմորասնկերը կարող են առաջացնել լորձապատյան	Այո
16.	Խմորասնկերի սպորները հապլոիդ են	Այո
17.	Թթվածինը խմորման արգելակիչ է ածխաջրերի բարձր կոնցենտրացիայի պայմաններում	Ոչ
18.	Ածխաթթու գազը խթանում է խմորումը	Ոչ
19.	Խմորասնկերը խմորման ժամանակ ավելի մեծ զանգված են առաջացնում քան շնչառության ժամանակ	Ոչ
20.	Խմորասնկերը որպես սուբստրատ օգտագործում են միայն գլյուկոզը	Ոչ